

Այն,  
կանուքը զգե՞մ...

# Ավոն՝ Կնուտը զցե՞մ...

Մանրապատումներ  
Ավետիք Իսահակյանի մասին



ԵՐԵՎԱՆ  
2024

## Բովանդակություն

|                         |    |
|-------------------------|----|
| Առաջաբան                | 6  |
| Ավետիք Իսահակյան        | 9  |
| Վիզեն Իսահակյան         | 19 |
| Վահան Դաքեսյան          | 44 |
| Լյուդվիգ Միքայելյան     | 47 |
| Ստեփան Չորյան           | 50 |
| Խիկար Բարսեղյան         | 53 |
| Նաիրի Զարյան            | 56 |
| Նվարդ Թումանյան         | 59 |
| Հովհաննես Ղանալանյան    | 61 |
| Գառնիկ Ադդարյան         | 64 |
| Աբաս Իսահակյան          | 66 |
| Բաղիշ Հովսեփյան         | 68 |
| Գեղամ Աֆրիկյան          | 69 |
| Գրիգոր Մարտիրոսյան      | 71 |
| Հենրիկ Գևորգյան         | 81 |
| Ծմավոն Թորոսյան         | 84 |
| Մկրտիչ Սարգսյան         | 85 |
| Բագրատ Նալբանդյան       | 88 |
| Օնիկ Փանիկյան           | 89 |
| Վարագիտատ Հարությունյան | 90 |
| Հրաչյա Հովհաննիսյան     | 92 |

|                     |     |
|---------------------|-----|
| Պահարե              | 98  |
| Մուշեղ Նարյան       | 103 |
| Լևոն Կանցյան        | 106 |
| Կարո Տիրատորյան     | 108 |
| Հմայակ Սիրաս        | 110 |
| Գեղամ Ալեքյան       | 113 |
| Օֆելյա Լալայան      | 115 |
| Վարդանուշ Բալայան   | 124 |
| Ժան Էլոյան          | 127 |
| Հոհիսիմե Պողոսյան   | 131 |
| Խաչատոր Պետրոսյան   | 132 |
| Սարգիս Հակոբյան     | 135 |
| Արամ Ինճիկյան       | 137 |
| Սուրեն Աղաբաբյան    | 140 |
| Գևորգ Հայրյան       | 142 |
| Սիլվա Կապուտիկյան   | 145 |
| Սուրեն Մուրադյան    | 150 |
| Լևոն Հախվերդյան     | 156 |
| Վահագն Դավթյան      | 157 |
| Գոհար Գասպարյան     | 158 |
| Ավիկ Իսահակյան      | 160 |
| Երախտագիտության խոր | 181 |
| Ծանոթագրություններ  | 183 |

# Առաջարան

6

Ավետիք Իսահակյանին վիճակված էր ապրել հարուստ, բովանդակալից և ազգանվեր կյանք՝ լի բազում ստեղծագործական նվաճումներով, նաև դժվարություններով ու դառնություններով, որոնք միահյուսվելով կարծես ստեղծել են մի յուրօրինակ գրական ստեղծագործություն, որի գլխավոր հերոսն ինքը՝ բանաստեղծն է: Եվ նա իր ժողովրդի պատմության մեջ ընդմիշտ մնաց որպես մարդկային վեհ, անբասիր կերպար՝ իր ստեղծած բարձրարժեք և անգնահատելի գոհարներով:

Ժամանակին Իսահակյանը հայ մեծ գրողների մասին երախտագիտությամբ և ակնածանքով գրել է, որ նրանցից յուրաքանչյուրն ազգ պահող է եղել: Մենք այսօր Էլ վստահաբար հավաստում ենք, որ իր կյանքով ու գործով նա համալրեց ազգը պահող այդ գրողների անմահ շարքը:

Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի երկարամյա աշխատանքային գործունեության ընթացքում, երբ մենք ամենօրյա աշխատանքում մեր հայրենակիցներին և Հայաստան այցելող հյուրերին պատմում ենք մեր մեծ բանաստեղծի մասին, նկատում ենք, որ Իսահակյանը նրանց հետաքրքրում է նաև որպես մարդ՝ իր առօրյայով, բնավորությամբ, խառնվածքի տիսուր և ուրախ դրսնորումներով:

Վարպետի մասին շատ են գրվել ջերմ և հետաքրքիր հուշեր, սակայն այս ժողովածուն առանձնանում է նրանով, որ այստեղ հավաքված են ինչպես Իսահակյանի, այնպես էլ նրա ժամանակակիցների, ընկերների և հարազատների հուշերից ծաղկաբաղ արված ուշագրավ, սրամիտ ու կատակով լի պատմություններ, որոնցում բանաստեղծը շատ անմիջական է, շիտակ, անկեղծ,

բարի և, որ ամենաքնորոշն է հայրենի Շիրակին, զյումրեցուն հատուկ հումորով պատմելու, սրամտելու և կատակելու ունակությամբ: Այստեղ հավաքված ամեն մի պատմություն, անգամ փոքրիկ դրվագները, բացահայտում, ամբողջացնում են մեծ գրողի և հայրենասերի մարդկային նկարագիրը:

7

Գրքում զետեղված հուշերում երևում է ժողովրդի մեծ սերը, պաշտամունքը սիրելի բանաստեղծի նկատմամբ: Ամեն տեղ նա թանկագին, սպասված և ցանկալի հյուր է: Նրա ներկայությունը զարդարում է ամեն մի հանդիպում, հաղորդում ուրախ և բարձր տրամադրություն՝ յուրաքանչյուր հանդիպումը դարձնելով անմոռանալի տոն:

Անշուշտ, դեռ կան և գուցե գտնվեն նոր նյութեր, հետաքրքիր պատմություններ, որոնք ժամանակի ընթացքում կհավաքվեն, կհրատարակվեն: Մեր նպատակն է այս հավաքածուով ընթերցողին տանել մեծ իմաստունի հումորի աշխարհը, ծանոթացնել, հաղորդակից դարձնել նրա անսպառ սրամտություններին, ընկերական կատակներին ու բարի հանաքներին:

## Ուուզաննա Մեսրոպյան

Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի  
ցուցադրությունների կազմակերպման  
և հանրահոչակման բաժնի վարիչ



# Ավետիք Իսահակյան

Իմ հուշերից  
(հատվածներ)

9

## Գևորգ Բաշինջաղյան

Երբեք չեմ մոռանում մի զվարճալի դեպք: 1908 թվի ուշ աշնանը գրականության նահապետ Ղազարոս Աղայանը Հովհաննես Թումանյանին և ինձ ասաց, որ հինգշաբթի Գևորգի մոտ ճաշի ենք կանչված: Գևորգն ասաց, թե՝ «Ղազարո՞ս, տղաներին առ, արի, մի քիչ ժամանակ անցկացնենք»: Տղաները Հովհաննես Թումանյանն էր, Կոմիտասը, Վրթանես Փափազյանը և ես: Հինգշաբթի հավաքվեցինք ժամադրավայր սրճարանում և գնացինք Գևորգ Բաշինջաղյանի տուն: Չանգ տվինք, դուռը բացեց Բաշինջաղյանի կինը, քաղցր ժպտալով ընդունեց և առաջնորդեց նկարչի արվեստանոց, որ միաժամանակ իր նկարների սրահն էր:

- Գևորգը տանը չէ, — հարցրեց Աղայանը:
- Ոչ, տանը չէ, հիմա կգա, խնդրեմ, մի քիչ սպասեցեք...

Տիկնոց սիրալիրության տակ նկատեցի ինչ-որ շփոթմունք, վարանում:

---

Նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի արվեստանոցում, նստած են  
(ձախից) Կոմիտասը, Ղազարոս Աղայանը, Վրթանես Փափազյանը,  
Լևոն Շանթը, կանգնած են Գևորգ Բաշինջաղյանը,  
Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Թիֆլիս, 1908

Ընդարձակ, լուսավոր սրահում սկսեցինք դիտել նրա նկարները, իրար ցույց էինք տալիս այս կամ այն նկարը, հիանում, հրճվում: Այսպես անցավ մի ժամ, թերևս ավելի: Աղայանը դիմեց ինձ.

— Եղ մարդն ո՞ւր մնաց, քաղցած եմ շատ... ձեն-ձուն չի լսվում: Այ տղա, միջանցք գնա, մի կերպ նայիր էս ու էս կողմ, մարդ կա՞ , չկա՞...

Մտա միջանցք, ականջ եմ դնում դռներին՝ ձայն չկա, շարժում չկա: Զգուշությամբ բաց եմ անում խոհանոցի դուռը՝ մարդ չկա, և ոչ միայն մարդ չկա, պլիտան էլ է լուռ, կրակ չկա: Բացարձակ ամայություն է տան մեջ:

10

Եկա, հայտնեցի:

Աղայանը զայրացավ:

— Տո՛, էս ի՞նչ օյին է:

Թումանյանն իր հումորով կպավ Աղայանի օձիքից:

— Այ մարդ, հենց որ լավ ճաշի անուն ես լսում, զլուխդ կորցնում ես, մարդ լավ չի իմանում՝ ճաշի՝ ենք կանչված, թե՞ չայի:

— Այ գիծ, – զոռում է Աղայանը, – ի՞նչ է, հայերեն չե՞մ հասկանում, խո փիլիսոփայություն չէր կարդում էղ մարդը... ասաց՝ հինգշաբթի...

Ծիծաղներս զսպած դիտում էինք նրանց կոիվը՝ Թումանյանը՝ կատակով, Աղայանը՝ լուրջ, երբ հանկարծ, դուռն արագորեն բացելով, բարկացած ներս մտավ Բաշինջանը և ուղղակի հարձակվեց Աղայանի վրա:

— Մարդ Քրիստոսի, ես քեզ ի՞նչ ասի...

— Դու ասիր՝ հինգշաբթի տղաներին առ...

— Հա է, հա, բայց ես ասի՝ էս հինգշաբթի չէ, մյուս հինգշաբթի:

Էս հինգշաբթի ես ինքս հյուր եմ ուրիշի մոտ, էղ ասի:

— Դե՛հ, էղպես կասեիր, էլի, ի՞նչ ես ինձ սարսադի տեղ դնում...

— Արի, էս մարդուն խոսք հասկացրու, – ձեռքերը հուսահատ վար թողեց նկարիչը:

Վերջապես միջամտեցինք և երկու մեր շատ սիրելի բարեկամներին հանգստացրինք:

Բաշխնջաղյանն իրեն վերստին գտավ, քաղցրությամբ ու ժպիտով պատմեց, որ հենց մենք տուն ենք մտնում, կին խսկույն խոհարարուհուն ճամփում է այն տունը, որ Գևորգը հյուր էր, հայտնելու, որ եկել են հյուրերը, ինքն էլ գնում է խանութներ գնումների:

Բաշխնջաղյանին հյուրասիրող ընտանիքը, ինչ ունի-չունի, սեղանից վերցնում, Բաշխնջաղյանի հետ ճանապարհ է դնում: Մինչև այդ կին էլ բերում է իր գնումները:

Մի խոսքով, բավական ուշ սեղան նստեցինք և շատ ուրախ ճաշասեղան ունեցանք, մինչև ուշ գիշեր խոսք ու զրոյց, կատակ ու ծիծառ: Կոմիտասն էլ երգեց ու նվազեց: Այդ անմոռանալի օրը Վրթանես Փափազյանը հավերժացրեց՝ լուսանկարելով մեր խումբը գեղեցիկ պատկերասրահում: Այդ նկարը ժամանակին լույս է տեսել Գարեգին Լևոնյանի «Գեղարվեստ» հանդեսում:

1940



## ՊԵՂՃ ՊՈՈՉՅԱՆ

...1904 թվին, ամուսնը, անցնում էի Ղարաքիլիսայով (Կիրովական), լսեցի, որ Պոոչյանն ընտանիքով այնտեղ է: Գնացի մոտը և մի զիշեր հյուր եղա: Բացի Պերճանուշից՝ բոլոր զավակները հետև էին: Դերենիկ Դեմիրճյանն էլ էր հյուր նրա մոտ: Նաև մի օրիորդ էր ապրում նրա տանը, իր աղջիկների ընկերուիին: Պոլսեցի էր և Եվրոպա պիտի մեկներ ուսանելու: Պոոչյանը նկատել էր, որ Դերենիկը և պոլսուիին իրար հետևում են...

12

Ծառ հուզիչ և միաժամանակ շատ զվարճալի էր Պոոչյանի հոգատար մտմտութը նրանց հանդեա:

— Այ տղա,— զաղտնաբար ասաց ինձ,— ես երեխեքն իրար վրա աչք ունեն: Աղջիկն ուզում է՝ զնա արտասահման, ո՞վ զիտի՝ էնտեղ ինչ շան ու զիլու բաժին կդառնա, ափսոս է: Ուզում եմ՝ միջամտեմ, բայց նրանք ինձնից քաշվում են, սրտերը չեն բանում: Նրանց սերը պիտի գլուխ բերել, խեղճ են: Դու կարաս, ընկեր տղա է, թե Դերենիկն է նազ անում, էդ զյադին համոզիր, թե աղջիկն է նազ անում, աղջկան համոզիր:

— Քյաշալը դեղ զիտենա, իր գլխին կանի,— պատասխանեցի ամենայն լրջությամբ:

— Աղա՛, ի՞նչ տեղին բան ասիր. ես էլ ո՞ւմ եմ սխտոր առնելու դրկում...

Եվ երկար ժամանակ ծիծառում էր իմ պատասխանի վրա...

*Օգոստոսի 28, 1937, Սևան*

## ՂԱԶԱՐՈՒ ԱՂՋԱՅԱՆ

1903 թվին շրջում էի Վայոց ձորում, եղա Օրթագեղում (թե Բաշգեղում), բնակիչները ցույց տվին ինձ զյուղի բարձրում բերդի ավերակները, որոնք ավանդաբար Պոոշ իշխանին են վերագրում: Պատմեցին, որ տարիներ առաջ Պ. Պոոչյանն

այցելել է ավերակներ՝ հայտնելով, որ իր՝ Պոռշյան տոհմի սեփականությունն է եղել: Ծիֆլիս վերադառնալիս Պոռշյանից ստուգեցի զյուղացիների պատմածը. հաստատեց: Մի օր խորքի մեջ Աղայանին պատմեցի դա:

— Գիտեմ,— ծիծառելով ասաց Աղայանը,— մենակ ինքը չէ իշխան մեր գլխին, մեր Օհաննեսն էլ իրան Մամիկոնյանների տոհմից է հաշվում: Դրանք ուզում են մեզ իրանց ճորտը շինել, քանի որ բանն էդպես է, ես էլ Քյորողլու սերնդից եմ: Բա դու ո՞նց պիտի անես, գլխիդ ճարը տես:

*Մարտի 11, 1941, Երևան*

13

## Հովհաննես Թումանյան Թումանյանի հետ Ասիում

1901 թվի սեպտեմբերին Օհաննեսն Ալեքսանդրապոլ եկավ Աբասթումանից, ուր բժշկվում էր...

Ալեքսանդրապոլում իրար ողջագորելուց անմիջապես հետո Օհաննեսն ասաց.

— Ասիում դեռ չեմ եղել, շատ եմ ուզում տեսնել, անպատճառ գլուխ բեր էդ բանը, շատ եմ խնդրում:

— Աչքիս վրա, դրանից էլ հեշտ բան ի՞նչ կա:

Մի երկու օր անց բանաստեղծ Հովհաննես Կոստանյանի հետ, որ իմ մորաքրոջ որդին էր, ճանապարհ ընկանք դեպի Անի: Կանգ առանք մեր տանը, Ղազարապատ զյուղում, հանգստանալու և մորս տեսնելու:

Երկու գիշեր միայն կարողացանք մնալ մեր տանը: Օհաննեսն անհամբեր էր, ուզում էր շուտով տեսնել Անին:

Մեր զյուղից մինչև Անի հազիվ 25 կիլոմետր լիներ:

Այցելեցինք Հոռոմոսի նշանավոր վանք, որի նախագավիթը սքանչելի է: Հովհ. Կոստանյանը մեզ նկարեց՝ Աշոտ Ողորմած թագավորի դամբարանի մոտ կանգնած:



Ավետիք Իսահակյանը և Հովհաննես Թումանյանը Ասիում,  
Աշոտ Ողորմած թագավորի շիրիմի մոտ, 1901

Մոտենում ենք Ասիի հոյակապ պարիսպներին և բուրգերին. Օհաննեսը հուզվում է, ոչինչ չի ասում, միայն արագացնում է քայլերը, հայացքը շարունակ պարիսպներին...

Արդեն մուլթ էր, որ հասանք վանահայր վարդապետի բնակարան, որն այցելողների հյուրանոցն էր միաժամանակ: Մի սարսափելի ճիշի հետ մթության մեջ պայթեց հրացանը, որի գնդակն ուղղակի անցավ երեքիս առաջով, եթե մի քայլ առաջ լինեինք, ո՞վ գիտի՝ ինչ պիտի լիներ մեր վիճակը:

15

Պարզվեց, որ վանահայրը բացակա է, և ծառան, վախենալով, թե եկողներն ավազակներ են, դիմել է անտեղի ինքնապաշտպանության:

— Տո՛,— ասաց Օհաննեսը ծառային՝ բերդանկա հրացանը տեսնելով,— մի զյուլլով երեք բանաստեղծ պիտի սպանեի՞ր:

— Լավ պրծաք, ըսել է՝ ձեր վերջը չէր եկել,— ամենայն անտարբերությամբ պատասխանեց ծառան...

1948

## ՈՒՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԻԼԻՉԱՏԱԼԻՆ

...Հայտնի է, որ Ումանոսն աննման առակ ու անեկդոտ պատմող էր: Երբ մի նոր անեկդոտ լսեր, անմիջապես ինձ պիտի հաղորդեր. առանց դրա հանգստություն չուներ:

Մի ձմռան գիշեր, երբ քնած էի, սենյակիս դուռն ամուր ծեծեցին: Վախեցած զարթնում եմ, լսում Ումանոսի ձայնը.

— Բա՛ց, բա՛ց, հենց նոր մի հրաշալի անեկդոտ եմ լսել...

Քնաթաթախ բանում եմ դուռը և թեթև կշտամբանքով ասում.

— Տո՛, տունդ չքանդվի, թիփիի՞ ես բռնվել, ի՞նչ է:

— Մի՛ նեղանար, նոր եմ լսել, համբերել անկարող էի:

Հագնվում եմ մի կերպ, նայում ժամացույցին, ժամը 2-ն անց է: Ումանոսը հևիիև պատմում է անեկդոտը. ծիծաղում ենք, անվերջ ծիծաղում:

ամբողջական գիրքն այստեղ է՝

**Bookmark** 